«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

5 Մարտի 2024, N 7 - 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի N 202-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԱԾ ՍԵՐԻԱ Բ N 0015 ԵՎ ՍԵՐԻԱ Մ N 0016 ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՆԵՐԴԻՐՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ՏԵՂԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016 թվականի մարտի 25-ի N 202-Ա/Ք հրամանով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին շնորհված Սերիա Բ N 0015 և Սերիա Մ N 0016 լիցենզիաների ներդիրներով սահմանված կրթական տեղերում փոփոխություններ կատարելու առաջարկություն ներկայացնելու մասին» հարցը (զեկուցող՝ ռեկտորի պարտականությունները կատարող, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյան), **հաշվի առնելով**, որ 2019-2023 թթ. բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցմամբ ընդունելության, միջին մասնագիտական կրթական հաստատությունների գերազանց և լավ առաջադիմությամբ ուսանողների ընդունելության և ուսանողների ներքին շարժունության միտումները որոշակիորեն կայունացել են, իսկ համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ու «staff.am» գործակալության կողմից իրականացվող աշխատաշուկայի միտումների վերլուծությունների արդյունքները փաստում են, որ աշխատաշուկայում մի շարք մասնագիտությունների գծով պահանջարկն էապես փոխվել է և ըստ կանխատեսումների կդրսևորի երկարաժամկետ բնույթ, **արձանագրելով**, որ մի շարք մասնագիտական կրթական ծրագրերում կրթական տեղերն էապես քիչ են, քան աշխատաշուկայում առկա պահանջարկը, իսկ որոշներով էլ ուսանողների

շարժունությունը և իրավունքների վերականգնումը վերջին երկու ուսումնական տարիների ընթացքում լուրջ խնդիրներ են առաջադրում լիցենզիոն տեղերի բացակայության պատճառով և դրան հակառակ մի շարք կրթական ծրագրերում անընդհատաբար առկա են թափուր լիցենզիոն տեղեր՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է**.

1. Դիմել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016 թվականի մարտի 25-ի N 202-Ա/Ք հրամանով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին շնորհված Սերիա Բ N 0015 և Սերիա Մ N 0016 լիցենզիաների ներդիրներում հետևյալ փոփոխությունները կատարելու առաջարկությամբ.

Սերիա Բ N 0015 լիցենզիայի N 001 ներդիրում.

1) 031101.01.6 «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-5-րդ կուրսերում *ավելացնել* 50-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 150-ը:
2) 041101.01.6 «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-5-րդ կուրսերում *ավելացնել* 25-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 150-ը:
3) 041201.01.6 «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-4-րդ կուրսերում *ավելացնել* 50-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 250-ը:
4) 041301.01.6 «Կառավարում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-5-րդ կուրսերում *ավելացնել* 80-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 190-ը:
5) 041401.01.6 «Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-5-րդ կուրսերում *ավելացնել* 50-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 125-ը:

6) 052201.01.6 «Բնապահպանություն և բնօգտագործում» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-4-րդ կուրսերում *պակասեցնել* 20-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 30-ը: *Հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-5-րդ կուրսերում *պակասեցնել* 25-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

7) 056201.02.6 «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-5-րդ կուրսերում *պակասեցնել* 30-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

8) 056802.01.6 «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-5-րդ կուրսերում *պակասեցնել* 25-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

9) 061104.01.6 «Տեղեկատվական համակարգեր» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-5-րդ կուրսերում *ավելացնել* 25-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 50-ը:

10) 101501.01.6 «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-4-րդ կուրսերում *պակասեցնել* 20-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 30-ը: *Հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-5-րդ կուրսերում *պակասեցնել* 35-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

11) 101801.01.6 «Սերվիս» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-4-րդ կուրսերում *ավելացնել* 50-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 100-ը: *Հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-5-րդ կուրսերում *ավելացնել* 20-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 50-ը:

Սերիա Մ N 0016 լիցենզիայի N 001 ներդիրում.

12) 031101.06.7 «Բնօգտագործման տնտեսագիտություն» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *ավելացնել* 10-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 20-ը:

13) 031101.08.7 «Մաթեմատիկական մեթոդները և մոդելները տնտեսագիտության մեջ» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 15-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

14) 031101.15.7 «Տնտեսության պետական կարգավորում» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 20-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

15) 031101.21.7 «Նորարարությունների տնտեսագիտություն» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 10-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 15-ը: *Հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 25-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

16) 041101.01.7 «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *ավելացնել* 15-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 40-ը: *Հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում պակասեցնել 25-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

17) 041101.03.7 «Աուդիտ» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *ավելացնել* 15-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 40-ը: *Հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 5-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 20-ը:

18) 041201.03.7 «Ապահովագրական գործ» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 15-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 15-ը: *Հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 30-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:
19) 041201.03.7 «Հանրային ֆինանսներ» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 20-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:
20) 041201.04.7 «Կորպորատիվ ֆինանսներ» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *ավելացնել* 10-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 25-ը:
21) 041201.05.7 «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում» ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *ավելացնել* 10-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 25-ը: *Հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 10-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:
22) 041201.06.7 «Բանկային գործունեության կազմակերպում» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 20-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 20-ը:
23) 041201.08.7 «Մաքսային վարչարարություն» ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 10-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 20-ը: *Հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 20-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:
24) 041301.11.7 «Զբոսաշրջության կառավարում» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը

1-3-րդ կուրսերում *պակասեցնել* 20-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

25) 041301.15.7 «Կառավարման տեղեկատվական համակարգեր» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-3-րդ կուրսերում *պակասեցնել* 20-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

26) 041301.16.7 «Պետական գույքի կառավարում» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 15-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

27) 041301.27.7 «Մարդկային ռեսուրսների կառավարում» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 15-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

28) 041301.28.7 «Բուժհաստատությունների կառավարում» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-ին կուրսում *պակասեցնել* 25 տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

29) 041301.31.7 «Առողջապահության կառավարում և վարչարարություն» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-ին կուրսում *ավելացնել* 10 տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 35-ը:

30) 041301.32.7 «Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 20-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 30-ը: *Հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 50-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

31) 041301.33.7 «Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 30-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել: *Հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում

պակասեցնել 30-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

32) 041401.04.7 «Մարքեթինգային հաղորդակցություններ» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-3-րդ կուրսերում *պակասեցնել* 30-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 20-ը:

33) 041401.07.7 «Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում» կրթական ծրագրի *հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 30-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

34) 056201.04.7 «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» կրթական ծրագրի *առկա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *ավելացնել* 5-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ սահմանել 30-ը: *Հեռակա ուսուցման* կրթաձևում սովորողների նախատեսվող սահմանային թիվը 1-2-րդ կուրսերում *պակասեցնել* 25-ական տեղով և ըստ կուրսերի սովորողների սահմանային թիվ չնախատեսել:

2. Ուսումնական բաժնին և մասնագիտական ամբիոններին՝ նախապատրաստել լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ ըստ լիցենզավորման կարգի ձևաչափերի:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նիստը նախագահող՝
ռեկտորի պարտականությունները կատարող,
ուսումնական աշխատանքների
գծով պրոռեկտոր **Ա. Վ. Գրիգորյան**

2024 թ. մարտի 5
Երևան